ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ 20 դեկտեմբերի 2021թ. ժամը 11:00 ***ք. Սպիտակ***

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 22 անդամ:

Բացակա էին ավագանու 5 անդամ՝ Կարինե Դիլաքյանը, Թամարա Լամբարյանը, Գագիկ Սահակյանը, Սամվել Սիմոնյանը, Գուրգեն Փիլոյանը /պատճառները նշված են համայնքի ավագնու անդամների գրանցման թերթիկում/:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին Ազգանուշ Ֆրանգյանը, Վարուժան Ապրեսյանը, Էդգար Թորոսյանը, Քնարիկ Պետրոսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Նիստի սկզբում Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը, ողջունելով և շնորհավորելով նիստին ներկա համայնքի ավագանու անդամներին, ներկայացրեց, որ 2021 թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ-ի 36 համանքներում, այդ թվում՝ Սպիտակ համայնքում տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Տարածքային ընտրական հանձնաժողովը Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմին է ներկայացրել ընտրությունների արդյունքների և մանդատների բաշխման վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ որի՝ Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման ընտրություններին մասնակցել են 4 քաղաքական ուժեր՝ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» կուսակցությունը, «ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ» կուսակցությունը, «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» կուսակցությունը,

«ՀԱՅՐԵՆԻՔ» կուսակցությունը: Համաձայն տեղեկատվության՝ վերը նշված քաղաքական ուժերը ընտրողների քվեն ստացել են հետևյալ թվային արտահայտությամբ՝ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» կուսակցություն - 8086, որը քվեարկության մասնակիցների ընդհանուր թվի 63,54%-ն է, «ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ» կուսակցություն – 3478, որը քվեարկության մասնակիցների ընդհանուր թվի 27.33%-ն է, «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» կուսակցություն- 666, որը քվեարկության մասնակիցների ընդհանուր թվի 5,23 %-ն է, «ՀԱՅՐԵՆԻՔ» կուսակցություն – 493, որը քվեարկության մասնակիցների ընդհանուր թվի 3,87 %-ն է: Սպիտակ համայնքի ավագանին ընտրվել է և մանդատները բախշվել են՝

1. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» կուսակցություն ՝ 18 մանդատ,

2. «ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ» կուսակցություն՝ 8 մանդատ,

3. «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» կուսակցություն՝ 1 մանդատ:

Թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N 24 արձանագրության համաձայն Սպիտակ համայնքի ավագանու անդամներն են՝

1. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» կուսակցություն

Նիկողոսյան Քաջայր Վորոտի

Մազմանյան Համլետ Հրաչյայի

Ավետիսյան Լուսինե Հրահատի

Մաթոսյան Արտակ Վանիչկայի

Սիսակյան Հայկ Զաքարի

Համբարյան Ալվարդ Համբարի

Հաջյան Մարտին Մարտինի

Իգիթյան Արամ Արտուշի

Յայլոյան Գագիկ Կամոյի

Սիմոնյան Ռաֆայել Ռուբենի

Աջամյան Աննա Մկրտչի

Սիմոնյան Սամվել Հրանթի

Սարգսյան Կարեն Այվարի

Էհտիբարյան Նունե Նորիկի

Եղիազարյան Արմեն Թորգոմի

Համբարյան Զալիկո Ֆրունզեի

Դիլաքյան Կարինե Զավենի

Թումանյան Վարդուհի Թադևոսի

2 . «ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ» կուսակցություն

Սահակյան Գագիկ Հենրիկի

Լամբարյան Թամարա Ժորժիկի

Ամիրյան Սարիբեկ Մկրտիչի

Ղազարյան Վահե Վոլոդյայի

Հակոբյան Նարինե Աշոտի

Փիլոյան Գուրգեն Վասիլի

Ասատրյան Արկադի Վարդանի

Աթյան Մանուշ Վարուժանի

3 . «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» կուսակցություն

Ասատրյան Սասուն Նորիկի

Այսպիսով, Սպիտակ վերակազմավորված համայնքի նորընտիր ավագանու կազմում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ունի ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին: ՀՀ Ընտրական օրենսգիրք ՀՀ Սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականը զբաղեցնող Քաջայր Վորոտի Նիկողոսյանն օրենքի ուժով համարվում է ընտրված համայնքի ղեկավար:

Խոսքը տրվեց համայնքի ավագանու տարիքով ավագ անդամին՝ Հայկ Սիսակյանին՝ հայտարարելու օրենքի ուժով ընտրված համայնքի ղեկավարին և հրավիրելու վարել նիստը:

Հայկ Սիսակյանը ողջունեց ներկաներին, ներկայացրեց համայնքի ղեկավարին և հրավիրեց նիստը վարելու:

Համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը ողջունեց և շնորհավորեց ներկաներին, ներկայացրեց նիստի օրակարգը:

Հարցեր չտրվեցին, առաջարկություններ չեղան:

Հարցը դրվեց քվեարկության, անցավ միաձայն:

Կողմ – 22 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի՝ համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի՝ օրենքի ուժով գումարված նիստի օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի նորընտիր ղեկավարի երդման արարողության կարգը հաստատելու մասին

(Զեկուցող՝ աշխատակազմի քարտուղար Ա. Ֆրանգյան)

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրը սահմանելու մասին

(Զեկուցող՝ աշխատակազմի քարտուղար Ա. Ֆրանգյան)

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.

(Զեկուցող՝ համայնքի ղեկավար Ք. Նիկողոսյան)

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱԶԳԱՆՈՒՇ ՖՐԱՆԳՅԱՆ/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի նորընտիր ղեկավարի երդման արարողության կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ – 22 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱԶԳԱՆՈՒՇ ՖՐԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի նստավայրը սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի

համայնքապետարանի վարչական շենքը, հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Շահումյան փողոց, 7:

Զեկուցողը ներկայացրեց որոշման նախագիծը:

Հարցեր, առաջարկություններ չեղան:

Նախագիծը դրվեց քվեարկության, անցավ միաձայն:

Կողմ – 22 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի 1-ին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել 2021 թվականի դեկտեմբերի 28–ին, ժամը 11:00-ին:

Զեկուցողը ներկայացրեց որոշման նախագիծը:

Հարցեր, առաջարկություններ չեղան:

Նախագիծը դրվեց քվեարկության, անցավ միաձայն:

Կողմ – 22 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64/

ՄԱՆՈՒՇ ԱԹՅԱՆ
ՍԱՐԻԲԵԿ ԱՄԻՐՅԱՆ
ԱՆՆԱ ԱՋԱՄՅԱՆ
ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ
ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐԱՄ ԻԳԻԹՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱԼԿԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՄԱՐՏԻՆ ՀԱՋՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ԳԱԳԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ